


բարդէն յառաջ չեն դար, կը կոչուին քոզ-
զական անցմունք կամ հաղորդակցութիւնը,
և որոնք յիրաւի ստոյգ հաղորդակցութիւնք
կամ ազդեցութիւնք են երկտարականութեան
տոռնայ հետաւորութեան մի մէջ: — Բայց
այս հետաւորութիւնս շատ կարճ կընայ միայն
լինել: Վասն զի նոյն իսկ ամենընտիր և ա-
մենագորաւոր գործիներու ձեռքով չենք կա-
րող քանի մը մետր հետաւորութենէն աւելի
տարածոյի մը մէջ հաղորդակնութիւն ձեռք
բերել: Կետեւաբար այս երեւոյթներս կրնան
միայն ծառայել քնարանական փորձերու հա-
մար, և մտորկային կեանաց գործոց մէջ օգտա-
ւէտ ազդեցութիւն կամ կիրառութիւն չեն
կրնար ունենալ:

Այսու հանդերձ՝ Այսպիսի մէջ մտածուե-
ցաւ օգտուիլ այս երեւութէն՝ ծովախորշի մը
մէկ եզերքէն մինչեւ միւսը հեռագրական
նշանները հաղորդելու համար, որ զանա-
զան պատճառներ անկարելի կ'ընէին ջրին
տակէն հեռագիր անցընելը: Ուստի՝ փոխա-
նակ օտյորական հեռագրի թելերուն՝ ծովա-
խորշին երկու եզերքները հաստատեցին մի
մի ահաւոր և գրեթէ անհնաւատայի մեծու-
թեամբ կարծառներ, իւրաքանչիւրը 180
մետր տրամագծով, որպէս զի կարելի լինէր
նշաններ հաղորդելու համար կարեւոր եղած
զօրութիւնն ունենալ. և իրացընէ այդ խըն-
դրուած նպատակին հասան և հաղորդակցու-
թիւնը ի գործ դրուեցաւ՝ առանց թելերու:
— Այս յաղթական արդիւնքն ստացուեցաւ
սակայն հապիւ թէ 800 մետր հեռաւորու-
թեան վրայ, որ էր մէկ եզերքէն մինչեւ
միւս եզերքը գտնուած միջոցը. որ է բռնի՝
երկու գործիներուն բունած տեղույ ընդար-
ձակութիւնն գրեթէ կը հաւասարը այն ստ-
րածութեան կիսոյն՝ որոյ մէջ կը ներգործէր
էլեկտրականութիւնն իւր ազդեցութիւնը: —
Յայտնի է որ այսպիսի ակերել հեռագիր մը
գործնական կեանք չէր կարող ունենալ:

Ուստի հարկ էր մէկզի ձգել երկտարա-
կանութեան սովորական հասանքներու փորձե-
րը, և երկտարական զօրութիւնը որիչ պա-
րագաներու մէջ շահակտ ընել՝ օգտուելով
վերջերս եղած նորանոր գիւտերէն, սրբ գիտ-
նականաց հանձարները կը սրէին զիւտէ ի

զիւս գիտելու: Մտրիսի բնարանը գիտցաւ
այդ գիտերէն օգուտ քաղելու բարեյաղող
ճանապարհն ընտրել, որ զինքը ցանկացեալ
նպատակին հասուց:

Շարայարելի



Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն Ա Մ Ի Ս

25 ՅՈՒՆՈՒԱՐԻ ԶՅՑ ՓԵՏՐՈՒԱՐ



Ա Մ Ե Ր Ի Կ Ա Հ Ի Ռ Ս Ի Ս Ա Յ Տ Ի Ն

Մ Ի Ա Յ Ե Ա Լ Ն Ա Հ Ա Ն Գ Ք

Պ Պ Պ Ա Ն Ի Ո Ց պաշտօնեայն ի Առաջնգտըն՝
Դիւպիււ-ըը-Լով, նամակ մը զրեց առ զօրա-
վարն Կանալեյաս ի Կուբա, շատ մը նախա-
տական բացաղբութեամբք ընդդէմ Մըկ Քին-
լէյի, կոչելով զնա (ցած զաղաքագէտն): Նամա-
կը ճարտարութեամբ ձեռք ձգեցին հակառա-
կորդք և զայն հրատարակեցին ի Նիւ Եորք:
Դիւպիււ-ըը-Լով բունազատուեցաւ անմիջապէս
իւր հրածարականը խնդրելու Սպանիոյ վար-
չութենէն՝ որ փութով ընդունեցաւ:

Եւ սակայն Միացեալ Նահանգաց զեսպանն
ի Մադրիդ, զօրավարն Աուզֆորդ, պահանջեց
որ նամակին բացատրութիւնք հրապարակաւ
ետ առնուին: Սպաստայի պաշտօնարանը պա-
տասխան տուաւ՝ որ իւր զեսպանին հրածարե-
լը և հրածարման ընդունուելուն եղանակը
պէտք էին զոհացնել զՄիացեալ Նահանգս:
Առաջնգտընը կառավարութիւնը բաւակաւ չհա-
մարեցաւ, իւր պահանջը կրկնեց և նոյն իսկ
զինուորական պատրաստութեանց ձայներ լլ-
սուեցան: Արդէն Մէյն զրահաւորը այցելու-
թեան պատրուակաւ Կուբայի նաւահանգիստ-
ներուն մէջ կը շրջէր, երբ անակնկալ պա-
տահար մը մտնցնել սոռաւ զեսպանական խըն-
դիրը: Մէյն զրահաւորը որ Հալմանայի նաւա-
հանգստին մէջ կը գտնուէր, ահաւոր պայթեամբ
մը ընկզմեցաւ, հետը տանելով 250 նաւաւս,

տիէն առելի: Ամեն տեսակ մեկնութիւն տրուեցաւ այս ահաւոր պատահարին, քննութիւնք բացուեցան և կը շարունակեն: Պայթիւնը եղած կը համարուի մթերանոցէն ըստ Սպանիացւոց: Ամերիկացիք կ'ըսեն որ Հայաստանի նստահանութիւն ներքեւ տորփուքը զրուած էին: Կուշայի իշխանութիւնք և Սպանիոյ թագուհին և վարչութիւնը յայտնեցին իրենց մեծ ցաւակցութիւնը առ Մըկ-Քիւնէյի և որոց փոխադարձ շնորհակալութիւնք ըրաւ անձամբ զորավարն Վրոզճորդ, և միանգամայն սեղան մը տուաւ փետրուար 24ին Սպանացայի և ըրլըր պաշտօնէից, հրաւիրելով միասին Սպանիոյ նոր պաշտօնեայն յիւսուցիչներն զՊ. Փուլոյ Բերնարտէ: Բայց ինչոքը վերջացած էլ համարուիր:

ԱՍԵՐԻՒԱԿԱ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՐԱՒԱՅԻՆ

Վերջին անպակաս են շփոթք և յուզմունքներն անկան և Հալլաւային Ամերիկայի Հասարակացութեանց մէջ:

Ի նիկարագուա վարչութիւնը բանակով զպոկեց պատասխանութիւնը: Ի Գուատեմալա փետրուար 9ի երեկոյ Օսկալ Սկալլիզըր անուամբ զերմանացի մը (այլքը կ'ըսեն անգլիացի) նախագահութեան պալատան մէջ սպաննեց զԻէինա Բարրիտա նախագահը: Անմիջապէս նախագահ հռչակեց անուա զորավար Մորալէս, որ կը զբանուէր ի Մեքսիկոյ: Մարտապանք փուխով կալանաւորեցաւ՝ բայց յոյն երեկոյին ինքզինքը սպաննեց բանտին մէջ: Ոմանք այս ամենը՝ զինուորական հարուած մը կը համարին կանխաւ պատաստեալ: Վրան զի նախագահն Իէինա Բարրիտա օրէնք մը հաստատել տուած էր անցեալ տարի, ըստ որում նախկին նախագահ մը կը մտք դարձնուլ ընտրուել անմիջապէս: Վտրի միւս թեկնածուք. յորտ էր նաեւ զորավարն Մորալէս, զիմած էին յեղափոխական յուզմունքներու, որոնք խառն զսպուռեցան: Այլք անձնական վրէժխնդրութիւն մը կը համարին, զի անցեալ տարի նախագահը հրացանի բռնի տուած էր հարուած վաճառական մը Յ. Ապարիկոյ որ յեղափոխութիւնք ընկնելու համար նախագահին պահանջած զրամ մերժեց էր:

Ի Գուաթիմալայ առ ժամանակայն նախագահն Կուէզուս, որպէս զի մտար ամայն ընտրութեանց մէջ ինքը յարազի՛ այժմէն սպառնացաւ իսպարանին որ եթէ 48 ժամուան մէջ չընգունի իւր ընտրութիւնը, կը ըսած է զայն: Եւ այնպէս ալ ըրաւ. 88 անձանցմէ Առաքանք ժողով մը կազմեց, որոնք զինքը Առժամանակեայ

վարիչ անսանուեցին և բանակը ընդունեցաւ զնա:

Ի Լա-Փալք (Ռոլիփա) նախագահն Ֆոննանդէս Ալոնզոյ պաշարման վիճակ հռչակեց քաղաքին ընտրութեան ժամանակ եղած շփոթեց համար: Ի Բրազիլ պաշարման վիճակը պիտի շարուանակէ ցվերջ փետրուարի:

Ա Ն Պ Լ Ի Ա

ՅԱՆՎՐԻԱ վերջապէս շնցաւ առաւել քան 160,000 մեքենագործաց զործադուլը, որուն համար Ժախուեր էին 27,000,000 Ֆրանք, բայց ի մեծադոյն զնանքէն, զի շատ մը յանձնաւարութիւնք որունք կ'ըլլային յԱՆՎՐԻԱ, զործադուլին պատճառաւ օտար երկիրներու յարնանուեցան: Հասարակաց կարծիքը կրկին զբաղեցաւ Մայլազոյն Արեւելից Ենդրով: Պաշտօնեայք առիթ փնտռեցին ճառարտութիւնք ընելու, հռչակելով միշտ՝ որ Անգլիա պատրաստ է առ ամենայն:

Փետրուար 8ին բացուեցաւ Գոտարանը և թագուհին իւր Աւետաղոյն մէջ ժանոց Մեծին Բրիտանիոյ բարեկամական յարաբերութիւնքը ամէն պետութեանց հետ և ի մասնաւոր շեշտեց Աքսիւնիոյ հետ եղած վաճառական զաշանց վրայ: Աւելցուց որ Եւրոպական Պետութեանց տարաքոյ կարգի զինուորք, կը ընդառան զԱնգլիա առաւելագոյն ծախքեր ընելու կայսրութեան պաշտպանութեանը համար: Ի մացուց դարձեալ՝ որ ներքին վարչական բարուրմանց վերաբերեալ ևս օրէնքներ պատրաստ էին:

Պակի աւետաղոյն պատասխանին վիճաւանութիւնքը նիւթ առնլով Լորդ Սուլզբըրի, քանի մը յայտարարութիւնք ըրաւ Մեծին Երկրասանիոյ Արտաքին Գործոց մէջ ըսնած ընթացից նկատմամբ: Մանոյց որ ի կրեաէ Թուրք զուեղքը կարեօք էին կարգ, կանոն պահել առաւ համար, և թէ Թուրքոյ առաւարկը Գէորդոս իշխանին թեկնածութեան մասին՝ ցարդ անզործադելի մնաց, Սուլթանին շղիջանելով և անհամաձայնելով երկուց Պետութեանց, իսկ Անգլիա շուներ ընդդիմութիւն:

Սակայն կարեւորագոյն լուրն էր Անգլիաւարինական զայինքը, և կատարուած 1897 մայիս 14ին, քաղկացեալ վեց յողուածներէ, ըստ որոց, երկու զայնազեալ ազգերը՝ իբաւանք ունին ազատ մտնել և ելլել իրարու երկիրներս մէջ: Մեծիքը և Կատարուած հրեարկութիւն կ'ընծայեր Մեծին Բրիտանիոյ և կ'արգելուր զի

նուց անցքը Մահտիի հետեւողաց և տերվիշ-
ներուն համար, զորս թշնամի պիտի ճանչնար:
Անզիրտ պաշտօնապէս կը ճանչնար զլարարար
մասն Արիստիդոսը:

Ստորին Ծոսարանը 228 շէտաթիւ մէջ հաս-
տատեց իռլանդիոյ տեղական վարչութեան հրո-
վարականին առաջին ընթերցումը, զոր առա-
ջարկած էր Քալֆօրը, ըստ որում իռլանդիոս
առանձին մատակարարութիւն պիտի ունենար,
և իւրաքանչիւր կոմսութիւն ընտրական ժո-
ղովքներ՝ նման Անզիրոյ և Սիլվաիոյ:

ԱՆԳՆՈՅ ՀԵՂԿԱՍԻՆ ԿԱԼՈՒԱԾԻ

Հնդկաստանի յուզմունք տակաւին չհասն-
աբարեցան, և տեղական պաշտամբութիւնք
ստատ և անդ անպակաս են. մասնաւոր Աֆղա-
նաց սահմանալիտին վրայ: Աֆրիտք՝ Նինա-
Քամար կընին մէջ փակելով անշիլացի վաշտ
մը, որուն կը հրամայէր զօրավարն Ուէստմա-
քաշէ, տպաննեցին հինգ ապաք, յորս հազա-
բայեան Հոտըն և 300էն աւելի զինուորք:
Յետոյ զօրավարն Ուէստմաքաշ մեծագոյն յոյժ
ֆլասներ տուաւ թշնամեաց:

Ժանտախոր կը ստատկանայ ի Բոմբէյ, ուր
եօթնեակի մէջ կը մեռնին մօտ 900 անձինք,
յորս և եւրոպացի հիւանդապահք:

Սուրանի կողմը առ ժամս նշանաւոր քայլ
մը չկատարուեցաւ: Տերվիշք յարձակողական
դիրք մը կ'ուզէն ցուցնել ընդդէմ Քրիշնեթի
բանակին:

Ա Ռ Ս Տ Ր Ի Ա

Աւտորիոյ ամեն կողմ առ ժամս արտաքու-
պէս ոգիները հանդարտած էին, բաց ի Քահե-
միոյ, ուր գերմանական և չեք կալաուկու-
թիւնը կը շարունակէ: Գերման աստանդք այլ
ես չեն ուզեր յաճախել Պարզայի վարժարան-
քը, մինչև որ չընտրհուի իրենց իւրաքանչիւր
ընկերութեան կրելու սեպհական զոյնները և
նշանադրեանքը. կ'ուզեն որ վարժարանքը փո-
խադուին Քահեմիոյ գերմանական քաղաքնե-
րու մէջ: Վարչութիւնը հաստատ կ'ուզէ ըլլալ
իւր հրամանաց վրայ: Կա մասնաւոր կը կար-
ծուի որ փնած է՝ մինչև մեծ հանդիսաները
փակել գերման չորս համալսարանները ի Վիին-
նա, Պրազա, յինընդարակ և ի Գրաչ, ինչպէս
նաեւ գերման բարձրագոյն վարժարանք, եթէ
աստանդք շարունակեն իրենց պահանջը: Տա-
կուրի հաստատուն վիճակ մը չ'երեւար: Մեծ
գոտարութիւնք կան:

Հունգարացի լրագիր մը զարնիդունքն Ոթն
կուէր էր ապապի Քալաուոր Մաճառաց: Կէս
պաշտօնական ծանուցում մը իմացուց՝ որ ան-
հիմն էին այս մտայնն և է ենթադրութիւնք:
Նա մասնաւոր որ թագաժողովն փրան. Փեր-
տինանա բաշորովին բժշկուած է:

Փետրուար 17ին փակուեցաւ Գալմացիայի
Աւագածողովը, մաղթանք կայտար յիւնեթելի
առթիւ. և յայտնելով իդէ մը որ խոռատ լեւ-
զուն՝ պաշտօնական լեզու ըլլայ:

Իստրիայ Աւագածողովը որչաժ ըլլալով որ
միայն իտալերէն լեզուն պաշտօնական լեզու
ըլլայ, կայտարկան հրաման մը որնչացուց այդ
որոշուութիւնը: Աւագածողովը ընդունած էր
նաեւ ուղերձ մը որով ի Տրեստ կը խնդրէր հաս-
տատել իտալերէն լեզուն համայնարայ մը:

Մեռաւ կոմս Քալենքի, երբեմն նշանաւոր
պաշտօնակալ կայտարութեան յամէն 1881-1890է:
Ծնած էր յամին 1835 և կատարեց զինուորա-
կան և քաղաքական սանդուխքը մի առ մի
մինչև ի պաշտօնատարութիւն Արտաքին Գոր-
ծոց: Իւր ջանքը եղած էր հաստատուն պահել
Երեքլիին զաշտակցութիւն և զօրուոր աղչե-
ցութիւն մը ունենալ Բալկաններուն մէջ ի
ֆլաս Թուսիոյ:

ԱՓՐԻԿԵ ՀԱՐԱՆԱՑԻՆ - ՏՐԱՆՍՎԱԼ

Ի Տրանսվալ նախագահի ընտրութիւնը կա-
տարուեցաւ և այս չորրորդ անգամ հինգ տա-
րուան համար զարձեայ ընտրուեցաւ արդէն
նախագահն Քրիւկեր, որ գոտար պարագանե-
րու մէջ կըցցեր եր պատուով և հաստատամու-
թեամբ պաշտպանել իւր երկրին անկախու-
թիւնը, նոյն իսկ ընդդէմ անդլիական ճարտար
հնարքներու, և ստացեր էր Գերմանիոյ մեծ հա-
մարկանքը: Իւր ժողովուրդը զինքը կը կոչէ
«Քրիւկեր քեռ»: Նախագահն Քրիւկեր ծնեալ
է յամին 1825 ի Կոլարերդ: Գրուի Քարիյուսոյ
զալթականութեան մէջ, և ապա անցեր էր
չՎասալ, ուր Պրետորիոս հիմնեց Տրանսվալ
Հատարականութեան Քրիւկեր Պրետորեցաւ ընդդէմ
Քաֆրաց և Զուլուներու: Յամին 1852 կուռե-
ցաւ ընդդէմ Անզիրոյ որ կուզէր իւր զաղթա-
կանութեանը միացնել նորահաստատ Հաստ-
րականութեան Քրիւկեր և զինուորութեանը չձգեց
մինչև Անզիրոս, յամին 1881, ճանչցաւ իւր հա-
տարկապետութեան ինքնիշխանութիւնը՝ ա-
նուանական միայն հոլատակութեամբ մը: Յա-
մին 1882 այս Անգլատակն բառն ալ ընկուեցաւ
ի Լոնդրոս անդլիա-պօեթրոս զաշտակարայն մէջ և

եղաւ անկախ և յառաջդէմ հասարակագե-
տութիւն մը, որ մտ ժամանակներու մէջ, մեծ
կարեւորութիւն առաւ մանաւանդ իւր Յոհան-
նըսրէրդ քաղամարդ մայրաքաղաքով:

Գ Ա Լ Լ Ի Ա

Ի Գալլիա շարունակեց զըէջֆուսական յա-
ղուքը, և շատաշալից դատը սկսաւ փետրուար
7ին ընդդէմ Զուլայի և Օրոր լրագրին: Վարչու-
թիւնը Զուլայի նամակէն այն մասերը ամբաստա-
ներ էր, որոնք ոչ Գրէյֆուսի, այլ Եպիսկոպոսի
խնդրոյն կը պատկանէին: Որով և արդարութեան
Առեանը վեճով սահմանեց արգելելու մը և է
զըէջֆուսական հարցումը, Զուլա ի վկայութիւն
կոչած էր 120 անձինք, յորս կազմէր Պերիէ, նախկին
նախագահ հասարակագետութեան, զըրազմարն
Բիլլոյ պաշտօնեայ պատերազմի, զըրազմարն
Բուստէֆը հրամանատար սպայա-
կազմին, զըրազմարք, հազարագետք, զնդա-
պետք, ծերակուտի անդամք և ուրիշ շատեր,
որոնք ամենն ալ հարցաքննուեցան պաշտպանող
փաստաւորէն: Բազում շառաւք և աղմուկք,
մերթ հակառակ և մերթ ի նպաստ Զուլայի: Ամէն
անգամ բռնադատեալ էր պահպանեցմէ պաշտ-
պանեալ երթալու իւր տունը: Գատը տեսեց
մինչև 22 փետրուարի և ապա խօսեցան հա-
կառակ և պաշտպան փաստաբանք: Զըրազմ-
արց վկայութիւնք ջաղխէի եղեր էին զըէջֆու-
սական խնդրոյն: Զուլայի պաշտպան փաստա-
բանը, Լարսի՛ որ այս առթիվ նշանուոր փա-
տաբաններու կարգն անցաւ, ամենայն ջանք
ըրաւ այդ տպաւորութիւնը աղարտելու, և
պաշտպանութիւնը լծեցուց վերջաբանով մը որ
հետորական արուեստի օրինակ մը կրնայ հա-
մարուիլ: և սակայն չէր կրցած Գրէյֆուսի
մայրանքը ուրիշի վրայ հզօր և ոչ նոր փաստ
մը բերել ի նպաստ Գրէյֆուսի: Ինքը հակա-
ռակորդներէն յուսացեր էր զայն որտալ: Եր-
զուեալք առանց մեղմացնելու, դատապարտեցին
զԶուլա պատժոց մեծագունին, այն է մէկ տարի
բանտի և 3000 Փռանք առգանքի: Օրոր լրա-
գրին տեսուը դատապարտուեցաւ 3 ամիս
բանտի և նոյնչափ գաւառի: Գոսին մէկ
զրեմէ յայտնուեցաւ որ Գրէյֆուս դատապար-
տած էր զազունի փուրթիչով մը որ պաշտ-
պանութեան չէր հաղորդուած և այս անկանու-
նութիւնը իրեն մեծ զէնք կ'ուզէր առնուլ պաշտ-
պանութիւնը և պիտի առնու յապագային: Բայց
միւս կողմանէ կը ներկայանար Երզուելոց՝ զե-
մաց Հայրենեաց պաշտպանութեան խնդիրը:

Զուլայի դատէն վերջը (24) ի թասարանի եւս
հարցումն եղաւ զըրազմարց յայտնութեանց
վրայ: Այս առթիւ Մելին նախագահ պաշտա-
նարանին, հասարակաց ծափահարութեանց մէջ
ծանայց, որ յայտ հետէ պիտի խոսեան
Գրէյֆուսի յուզմունքը շարունակել սուղոյնե-
րուն զէմ, և թէ հարկ էր, նոր օրէնքներ պի-
տի առաջարկէր: Թասարանը Մելինի 416 վտա-
հութեան քուէ առաւ ընդդէմ 81 քուէից, և
վճեց որ Մելինի խօսքը տպուած կ'ըլլար և
մեն քաղաք և զեւր:

Վախճանեցաւ քաջ զըրազմարն Լազարոյն Ին-
նուսն ամաց, որ գտնուած էր Ալեքիթի և Իսա-
վէոյ պատերազմաց մէջ և ինչպէս նաեւ 1870ի
Մարտ 8ուրի և Գրապետի կողմներու մէջ
քաջ սնուն ստացեր էր. և Հասարակութեան
ձեռքէն ստեր էր շՄոմմարտը: Ապա անուա-
նուեր էր կառավարիչ Պարիզու: Ստացած էր
Լէժինի չ'Օնէօրի (Պատուոյ Լէժին) մեծ խալը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Յունուար 27ի Գուլիէլմուս Բ կայսեր ծննդեան
39դ տարեկարծը ըսոր Գերմանիա անեց ար-
աստովոր շքեղութեամբ և հանդէսներով: Լրա-
գրէք պանծալի յառուածներ հրատարակեցին:
կայսրը այս առթիւ շնորհեց Գալլիայ զեպա-
նին, Մարգրէն Նոսայ, Կարմիր արծուի մեծ
խալը:

Նոյն օրը լուր հասաւ ի Բեռլին որ ի Ձիմո,
Քիտաւ 2էտի ծոցին մէջ գերմանացի նաւատարի
մը տպանուեր է լին ամբողին, և թէ ջուկտա մը
մեկներ է պատժելու յանցաւորքը:

Ի խորհրդարանի, Արասքին գործոց պաշտա-
նեայն Բելուֆ՝ Ելեւմտից վեճաբանութեանց
մէջ, ծանայց որ եթէ ամեն Պետութիւնք ըն-
դունին Գէորգիտո իշխանին թեկնածութիւնը ի
կրեմէ, Գերմանիայ չէր ձեար այդ բանին հա-
մար արուիլ Ռուսիոյ հետ, յիշեցուց նաեւ
բիւսարկուտն առածը որ կրեած չէր արժեք պա-
մերիանիացույ մը սովորները. « Կը փափագինք
Եւրոպիոյ համաձայն ներդաշնակութեան. թէ
յանկարծ շփոթ մը ծագի, մեք կը քաշուինք
սրինգնիս մէկը կը ընենք և նուազանցանդէսին
սրահը կը թողունք կ'ըլլենք:» Բելուֆ ծա-
նայց եւս որ ի Մայրաքոյն Արեւելոյ, Գերմանիոյ
վարչութիւնը իւր օրինուոր եղանակաւ ր
չէ թշնամացուց ոչ մի պետութիւն:

Ե Պ Ի Պ Տ Ո Ս

Պահերէն կը ծանուցուի որ Եղիպտոս Սու-
լանի պատերազմին ծախքերուն հասնելու հա-
մար, անգլիական նաւային ընկերութեան մը
ծախքը է Խոտիվի շողենաները, շտեմարանք
նաւարանք և ամենայն կահք՝ 150,000 լիբայից:

Բնական է, Գալլիական ջրադիրք շտեմարան
կը բողբոքն այս եղելութեան դէմ, մեծապէս
նպատաւար Անգլիոյ հպատակներուն: և յայ-
ուսնի որ Պարսուց Յանձնաժողովը՝ օջնացնէ
այս վաճառումը: Կըտեն որ տրուած գումարը
և ոչ իւր արժեքին տասնհարիչ գումար կը կազմէ:
և զորք հռակուելուն պէս, մեծազոյն առա-
ջարկներ ելած են, առանց պատասխան մը ըն-
դունելու:

Ի Տ Ա Լ Ի Ա

Խօսարանը իրեն նախագահ ընտրեց զԲեան-
քերի, որ արդէն շատ անկամ՝ այդ պաշտօնը
վարած էր:

Հացի Թանկութեան համար խռովութեանց
առաջը առնելու նպատակաւ, Խօսարանը՝ ցա-
րնի մտից առաքել Փր. 7,50Էն իջեցուց Փր. Յ:
Դարձեալ ի զէն կնչցց 40,000 զինուորք,
քաղաքաց պահանջողքը աւելցնելու: Արժա-
տակնք յունուար 30ին ի Հոռով մեծ. ցոյց
մը պատարաստած էին, զոր խափանեց Ռտիկա-
նութիւնը:

Փետրուար ի ի Խօսարանի Արտաքին Գոր-
ծոց ընդհանուր քարտուղար՝ կոմսն Բոնին ծա-
նոց որ Խոտլիս ոչ որդղակի և ոչ անուղղա-
կի երբեք յարաբերութիւն ունեցած էր Դրէյ-
ֆուսի հետ: Այսու հանդերձ Խոտլիս շատ մը
համարարանաց աշակերտք ուրախակցութեան
և զմայման հեռագրերնը օւղեղեցին առ Ջորա-
մանուանը որ յետին նախատուեր էր իրը
« Իտալացի »:

Խօսարանը սահմանած էր հինգ երեսփոխանք:
քննելու Կրիպիի դէժ եղած ամառաստանու-
թիւնը, իրը դրամ ստացած Բոլոնիոյ դրամարկ-
դէն, Յանձնաժողովը սկսաւ իւր աշխատու-
թիւնը:

Իտալիա եւս երկու զրահուոր զրկեց շինա-
կան ծովերուն մէջ: Ի Խօսարանի Մոլլի՝ ընկե-
րավոր երեսփոխանը ամառաստանեց զպատե-
րազի պաշտօնեայն, որ կը ներքէ Հոռովայն պա-
հանդուրանեան շատ մը սպայեց և զինուորաց՝

յաճախելու: Անարատ Յղութեան կրօնական
քաւմարմանց: Պատերազմի ընդհանուր քար-
տուղարն Աֆան-դի-Սիվիլիերա պատասխանեց՝
որ վարչութիւնը հարկ մը չէր տեսած սպայից
և զինուորաց արդիւնու կաթուղիկէ ժողովք-
ներու յաճախելը:

Իտալիոյ շատ քաղաքներու մէջ տօներ կ'ըլլան
և կամ կը պատարաստուին ի յէշատակ 1848ի
Յեղափոխութեան:

Փետրուար 18ին ի Տրոյիս (Պալերմոյ) ամ-
բոխն սաք ելաւ աշխատութիւն պահանջելով
որպէս զի սպրի: Ռտիկանութիւնը ի զուր
շանց ցրուելու, հասաւ նաեւ քանակը, որուն
վրայ քար և հրացանի հարուածք թափեցան:
Ձինուորք փոխադարձ պատասխանեցին, և հինգ
զիւղացիք սպանուեցան և 40 վերաւորուեցան.
նոյն օրինակ սպտսմբութիւն մը ծափեցաւ
նաեւ ի Մոդիկա (Սիրակուսա), ուր մարտը
կը գուրէր « հաց և աշխատութիւն »: Ձինուորք
փութով նուաճեցին, բայց ամբոխէն մեռան
երկու անձինք և 30 վերաւորք:

Ի Հոռով յամենուսա զիմեցին հազարուոր
ուխտարք ներկայ գտնուելու փետրուար 13ի
Լեւոն ծփ քահանայապետի՝ քահանայակախ
օժման 60դ տարւոյն: Չայնուոր պատարազին
ի Ս. Պետրոս, տոմակով միայն ներկայ էին
80,000 անձինք: Ճոխ և բազմաթիւ ընծաներ
հասան առ Լեւոն ծփ քահանայապետ յամե-
նայն սակնք:

Կ Ի Ս Տ Ե

Կրետէի խնդիրը կը գտնուի իւր հատիկին վի-
ճակին մէջ, և որչափ որ նոյն իւր Գերմանիա
զիջւումն ցըցուց Գեորգիոսի Թեմակութեան,
սակայն Սուլթանը զիւր հաւանութիւն չուսուաւ:
Կըտուի, որ Չարք Գեորգիոս իջնանին հրաժար-
ուի տուած ի յամենայն զիպուսածական իրա-
ւանց առ զահն Յունաստանի, և այս պարա-
պայն թերեւս զերաջնէ խնդիրը օսմանեան Պե-
տութեան առջեւ:

Յ Յ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Նաւային հրամանատարն Քաղաքիւր, նա-
ւային զինուորակալն Ատենի սաշեւ կոչուած
էր. արովճեաեւ հեռադրած էր: առ նաւային
պաշտօնեայն՝ որ ծովակալն Աքուրաքիւր: կը
մտածէր զհայրենիս, ընկալեալ հրամանները ի
զործ չընելով: Յաղմաթիւ փոփային սպայք վիս-

յութեան կանչուած էին: Քոքըրուրի անպարտ արձկուեցաւ:

Ի Թեապիտ Ագրաֆացի լեռանց մէջ (որ իբր չէպէ՞ք սահման կը կազմէ) դանազան ազատ խումբեր ձեւացած էին: Անշնուսահ փաշա՝ Յունաց հրամանատարին ազդ մը դրկեց որ այդ խումբերը չորս օրուան մէջ հեռանան և Ագրաֆացի դիւղացիք հնազանդին և սուրբ տան: Յետինքօ կը պնդէին որ իրենք ազատ են: Խումբերը չհեռացան և Ագրաֆացիք չհնազանդեցին: Ետ կրկին ազդարարութեան, հինգ հազար զօրք շուք յԱգրաֆա, որոյ դիւղացիք մուղդին կուռով ընդդէմացան, բայց կորսնցնելով շատ անձինք: Ագրաֆացիք մեծաւ մասամբ թողուին իրենց լեռները և հեռացան:

Յունական պետութիւնը ուրիշ բան չկրնալով ընել, հեռագրեց առ իւր դեսպանը ի Կ. Պօլիս: Բողբը իւր եղածին դէմ և իւր բողբը հարգրելու միւս Պետութեանց դեսպաններուն:

Որոշ կը ծանուցուի (23) որ Ռուսիա, Անգլիա, Գալլիա համերաշխութեամբ պիտի տան Յունաստանի 120 միլիոն ֆրանք 5/6 այսպէս Թեապիտայէ մեկին թուրք բանակք:

Բ. Գուռը կը պահանջէ սակայն որ նախ կրտական խնդիրը վերջ մը առնու: Մեծ Պետութիւնք կը պատասխանեն որ այդ երկու խնդիրք իրարու հետ յարաբերութիւն չ'ունին:

Ե Ո Ւ Ե Ց Ե Ի Ն Ո Ր Վ Ե Գ Ի Ա

Շուէտի և Նորվեգիոյ մէջ եղած միութեան կապը, տարուէ տարի զօրաւոր ցնցուցն կ'ընդունին: Նորվեգիա կը համարի որ այդ միութեան մէջ ընաւ հաւատարութիւն չկայ, ամենայն ինչ նպատակար է Շուէտի: Երկու երկրին ալ եօթը մեծ օրէնսդէտք հաստատուած են ջանալու օրինական ճամբով հաստատուն հիմունքներ դնել, սակայն դեռ դառտ են սահմանեալք:

Նորվեգիա քիչ տարի տառով կը պահանջէր որ ինքը եւս ունենայ իւր ազատ պաշտօնաբանը, իւր սեպհական ղեկավարք և հիւպատոքը: Այժմ այդ պահանջներուն վրայ աւելցուցած է զայն եւս որ կարենայ տիրաբար վաճառականական և քաղաքական դաշինքներ հաստատել և ունենայ իւր սեպհական դ'օշը: Օսկար Թազաւորը իւր փորձառութեամբ և ժողովրդականութեամբ ցարդ կրցաւ ոգինըը հանդարտ բանել: Քիչ օր առաջ միութիւնը քննող յանձնաժողովոյն յանդիման կը հասաւնէր որ «Առաւուած ամենակարող հոգի իմ ժողովրդոյս»

ազազային վրայ, ինքը պահէ 20 դարու մէջ ալ այն միութիւնը որ 19 դարուն մէջ տուաւ ապահովութիւն երկու քար ժողովրդոց և երջանկութիւն ընակչաց»: Օսկար մեկնեցաւ ի Քրիստիանիա, ուր բացաւ Թոսարարը, բայց Արմատականաց պահանջներուն առջեւ, հրատարեցաւ պաշտօնարարն և Թազաւորը Թոսարանի նախագահին Պ. Ստեփ յանձնեց, կաշմելու նոր պաշտօնարարը, զոր փութով եւս կազմեց:

Ո Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Ռուսմանիոյ յիշատակութեանց (Մուրադիա, վալաքիո) 39 ր տարեալքին առթիւ մեծ տօներ կատարուեցան և Ռուսմանիոյ երկրորդակարգ վարժարանաց ընկերութեան յանձնաժողովը սահմանեց ստորագրութիւն մը բանալ զբամ հուաքելու նպատչոն, Քի արձան կանգնելու համար: Միանգամայն երախտագրական հեռադիր մը ուղղեց առ կայրուհին Եստինի:

Ո Ո Ւ Ս Ի Ա

Պետրբուրգի լրագիրք կը ծանուցանեն որ ի Հարուրդ վաճառականական ընկերութիւն մը հաստատուած է, նպատակաւ ծաղկեցնելու վաճառականութիւնը ընդ Գերմանիա և ընդ Սիբերիա հարաւային ծովուց ճամբով, ընդ Սթի և Յենիսէի:

Գարնեալ մայրաքաղաքէն հեռադիր մը կը ծանուցանէ որ ուուս և չին վարչութեանց մէջ համաձայնութիւն մը եղած է, բոս օրուս Արեւելեան Ձինաստանի երկաթուղին երկու կէտով պիտի միանայ ուսական երկաթուղեաց հետ, մին յՈւննի կայարանը, Տրանսքալաքլի գծին վրայ, միւսն Ուստոբրի գծին Նիկուսկոյէ կայարանէ 95 քիլոմետր հեռու:

Ռուսաստան վաճառականական տեսակէտով կ'ունենար ուրիշ ճանապարհ արդիւնք մը եւս: Բանալով հիւսիսային ծովուց վրայ կաթերիտ նաւահանգիստը որ ձմեռը ազատ է սառչցնելք: Արդէն կ'առուցնասիբուրի՝ նոր նաւահանգստին հետ միացնելու Ֆինլանդիոյ երկաթուղեաց գիծը, և ապա Սիբերիոյ գիծը: Կը համարուի որ կաթերիտ նաւահանգիստը եւրոպիոյ առաջին նաւահանգիստներէն մին ըլլայ օր մը իւր յարաբերութեամբք:

Ս Ե Ր Բ Ի Ա

Պաշտօնարանը ամբողջովին ներկայացաւ Միլան Թաղաւորակօր, յայտնելով իւր հաւասակութիւնը և իրէն օգնելու անոր ջանից: Յետոյ օրհնուեցաւ պալատը որուն ներկայ էր նաև Աղեքսանդր Թաղաւորը:

Միլան չուգաւ ի Վրանյիս, այս քաղաքիս ազատութեան առթիւ ասնորուն նախագահելու, առանց իւր Թաղաւոր որդւոյն:

Ս Պ Ա Ն Ի Ա

Ի Սպանիա ի նպատակ վէյլէր զօրավարին յուզումը հանգարտեցաւ: Ի կուրս սպանիական վաշտ մը որուն կը հրամայէր հազարապետն Բենեդիկտիս, խորակեց Արանդուերայի ապստամբ դունդերը և զինքը սպաննեց: Ապրտամբ գլխաւորներէն շատերը կը մեկնին ի Համբուրգ:

Փետրուար 13ի 10,000 անձինք ցոյց մը ըրին ի Բարչելոնա, բողոքելով ընդդէմ այն ասնջանքներուն, որք իրր թէ ի դործ կը դրուին եղեր ի Մոնեուիք բանտարկեալ անիշխանականաց: Վարչութիւնը հրատարակեց որ բոլորովին սուս են այդ ասնջանաց պատմութիւնք և ամենն ալ հնարուածք: Եւ սակայն Սպանիա ընդերկար կը յուզի այդ լուրերով: որ տխուր արդիւնքներ բանեցաւ յորս և կանոնական կաստիլլոյի սպանութիւնը:

Մ-Ն.



ՆՈՒՆԻՐ ՄԱՆԿԱՆՑ

ՄՈՒՐԱՑԻԿ ԱՂՋԻԿԸ

Փնփրոնի աղիլի մ'է մուրացկամ Որ քիւ մը հաց կ'ուզէ ձեզմէ, Տուէք ամենը թըրուառ աղկկամ Տուէք տուէք ամօթի է: Ո՛հ, աղայամբոս մի' մերժէք, Ձեր սիրամ ըսէ ինչու համար. Վեց տարեկամ եմ, չուսիմ մայր. Ամօթի եմ իմօ գըթացէք:

Երէկ գիւղիմ մէջ համողէս կար, Բըմաւ մէկում մըտքէմ չամցայ. Բըռմեր էիմ շուքիմ տակ պար, Ասաղ, ես բամ մ'ալ չըկերայ: Ներքեցէք իմօ եթէ կ'ուզեմ Ուզածս է հաց ոչ ուրիշ բամ, Քըչիկ մը հաց է բաւակամ, Ո՛հ, մի' չիւէք, ամօթի եմ:

Դուք մի' կարծէք թէ չեմ գիտեր թ' աշխարհիս մէջ կըրել պարտիմ. Սակայմ ես շատ փորձիկ եմ դեռ, Ա՜հ, մի' թողուք զիս որ սեռմիմ: Տըւէք, տըւէք խեղճ փոքրիկիմ, Նա ձեզ համար պիտ' աղթթէ, Տուէք, շուտ տըւէք ամօթի է, Տուէք ձեզ ուրիշ մը տայ կըրկիմ.



Ձ Մ Ե Ռ

ԵՐՐ ձիւմ կու գայ խիստ ցուրտ ատնմ, Երբ քակէ հովը տամիթմերմ, Երբ սառն ոսից տակ շառաչէ, Ծաղիկմ ողբայ, ծառմ աղաչէ:

« Աստուած, մի' գնեզ ձեռքէ ձրգեր, Երբ գամ ցուրտեր, Երբ գայ ձրմեռ, Մի'ք մոր ծիւթըր պահպամէ Միմիւն քամիմ ամցմի փըչէ »: